Իմբաֆրոմենեան Աբրաբաբ Ամսաֆրոյ

Առանց զարդարելու նամակիս բնաբանը բերկրապատար խնդութենով՝ շարժված ահա և այս օրը չեմ կարող լռութեան տալ. պատճառ, խղճահարվումէ սիրտս այսպիսի մի յիշատակաց արժանի տօնը իւր փառաւոր հանդիսովը գրաւանի տակ թողնելու. և ինչո՞ւ կ'թողնուի, երբ Ազգը շարթէ շաբաթ՝ ամէն ամիս օրագրերի և լրագրերի միջոցաւ կ'սպասէ իւր մասերում գոյացած Ազգային լուրերի և հանդէսների տեղեկանալու, որպէս զի, նրանցով խրախուսվի և քաջալերվի իւր արդէն սկսած կամ նոր սկսելի յառաջադիմութեան գործերի մէջ. Այս տօնը մեր Վարդանանց յաւերժացած սուրբ նահատակների տօնն է, որ կատարվեցաւ մի փառաշքեղ և գրաւող հանդիսով Շամախւոյ սուրբ Աստուածածնի նորակառոյց եկեղեցւոյ մէջ՝ մեր բարեջան Հոգևոր Տեսչի Սրբազան Անդրէաս Արքեպիսկոպոսի հանդիսաղրութեամբը.

Չորս օր յառաջ Ս. Հայրը Պատարագի միջոցաւ իւր գեղեցիկ ատենաբանութեամբը Վարդանանց դարը իւր յիշատակներով ժողովրդեան բացատրելուց յետոյ՝ բարեմաղթեց և ցանկացաւ նոյն սէրն ու ոգին ունենալ Կրօնի և Ազգութեան մէջ. և անհրաժեշտ պարտականութիւն դրաւ ժողովրդեան վրայ, որ նոյն օրը ամսոյս 19—ին առանց զբաղելու մի ինչպիսի և իցէ գործով, ներկայանան հանդիսին և յարգեն այն տօնը ուրախութեամբ. Այո, ճշտութեամբ կատարուեցաւ Ս. Հօր յարգելի պատուէրը. Այնքան ջերմեռանդութեամբ ժողովվեցան, մինչ հազիւ թէ հերիքանում էր այն մեծ և հոյակապ տաճարը պարունակելու իւր մէջ բազմաթիւ ամբոխը. Երբ վերջացաւ պատարագը, հանդիսագիր Ս. Հայրը կատարեց Կայսեր գահակալութեան մաղթանքը (մոլեբն) իւր շրջապատած հոգևորական դասովը. և ապա հոգեհանգիստեան պաշտօն՝ ի յիշատակ մեռելոց, որին հետևեցաւ և Վարդանանց տօնի հանդէսը.

Սրբազան Հօր ծախսով եկեղեցւոյ ջահերը վառվեցան, նոյնպէս և բաժանվեցան սպիտակ մոմեր ամենեցուն խուռն բազմութեան. Օրիորդաց ուսումնարանի աշակերտուհիքը իրանց ուսուցչուհու հետ համեստութեամբ կանգնած էին. Նոյնպէս և զպրոցի աշակերտները իւրեանց բոլոր ուսուցիչներով կարգաւորապէս դասաւորված, ձեռներում բռնած ունելով կանաչ ոստեր և վառած մոմեր. Պաշտօնից յետոյ երգեցին զպրոցի աշակերտները իրանց երաժիշտ վարժապետ Բաղդասար Սարկաւագի վերակացութեամբ "Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքիններաց" շարականը. Կարդաց և այս տօնի վերաբերմամբ մի ճառ շնորհունակ Սարկաւագ Աւետիսն Փինաչեանց. Ազգային ախորժալուր երգերով թնդուցեր օրը, որով և ոմանց աչքերում ծուխանումին ուրախութեան արտասուք. Վերջապէս Ս. Հայրը բարեմաղթելով կեանք և բարօրութիւն Ազգի, Կայսեր և Վեհափառ Հայրապետի համար՝ արձակեց ժողովրդեան. Սակայն, կամելով այդ օրը ուրախութեամբ պսակել, Ս. Հայրը պատրաստում ընթրիք զպրոցի ուսուցիչների և Կենսիստօրական ծառայողների համար. Երբ մօտեցաւ երեկոյն, Առաջնորդարանի գաւթումը դարձեալ Ս. Հօր ծախսով կատարվեցաւ ճրագահանդէս և հրախաղութիւն. Եկեղեցւոյ մէկ կամարաղեկի շուրջը փայլումը գոյնզգոյն վառ լապտերներով, իսկ միւսը գեղեցիկ կանաչ և կարմիր գոյնով յօրինած վենկելով, որի ճակատին կ'շողար Արբայական Թագը, և այսպիսի վերտառութեամբ "Կեցցէ Կայսր Ալէքսանդր". և "Հայոց հաւատ Հայոց Տուն, Կեցցեն յաւէտ հաստատուն". Այստեղ Հայ մանկուց բազմութեան նոյնպէս և հասակաւորների ուրախութեան աղաղակները և կեցցէները մինչև անգամ դրացի ազգերից շատերին գրաւած՝ կ'հրաւիրէին ի տես հանդիսին.

Ցաւով եմ, որ . . . . Խմբագրութիւնը կընդունէ այս նամակը, և տեղի կ'տայ իւր պատուական Արարատ ամսագրի թերթերում ի վայելս ընթերցասիրաց.

Յովհաննէս Մէրգաբէկեան.

Ի 20 Փեբրվարի 1870 մ.
ի Շամախի.

Յունվ. 29 ամսաթուով և 117 Օրագրոյ մէջ կ'ընթեռնուի, զի Կ. Պոլսոյ Գալատագարուայի Ազգ. զպրոցին վերանորոգութեան համար պէտք եղած երկու հարիւր լիրայից՝ 100 ոսկին մեծ. Յակոբեան եղբարք, 50ը